12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԷՔՍՏԵՌՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ՔՆՆԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Սիրելի՛ աշակերտ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքը: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:
Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ե՞րբ է կազմավորվել Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ):

1) 1990 թ.
2) 1991 թ.
3) 1992 թ.
4) 1993 թ.

2 Ե՞րբ է Հայաստանի Հանրապետությունն անդամակցել Եվրախորհրդին:

1) 2000 թ.
2) 2001 թ.
3) 2004 թ.
4) 2003 թ.

3 Ո՞ր թվականից են հայ զինվորները խաղաղապահ առաքելություն իրականացնում Կոսովոյում:

1) 2004 թ.
2) 2003 թ.
3) 2002 թ.
4) 2001 թ.

4 Ե՞րբ է Վրաստանում տեղի ունեցել «Վարդերի հեղափոխությունը»:

1) 2003 թ.
2) 2004 թ.
3) 2005 թ.
4) 2006 թ.

5 Ե՞րբ է «Ալ Քայիդա» ծայրահեղական կազմակերպությունն ահաբեկչական գործողություն իրականացրել ԱՄՆ-ում:

1) 2001 թ. սեպտեմբերի 11-ին
2) 2002 թ. օգոստոսի 10-ին
3) 2003 թ. հոկտեմբերի 10-ին
4) 2004 թ. նոյեմբերի 11-ին

6 Ե՞րբ է ՄԱԿ-ը ընդունել Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը:

1) 1975 թ.
2) 1969թ.
3) 1948 թ.
4) 1955 թ.

7 Ո՞ր երկիրն է տիեզերք ուղարկել Երկրի առաջին արհեստական արբանյակը:

1) ԱՄՆ
2) Ճապոնիա
3) Չինաստան
4) ԽՍՀՄ

8 Հետևյալ երկրներից ո՞րն է 2001 թվականին միացել Շանհայի հնգյակին:

1) Ռուսաստան
2) Ուզբեկստան
3) Չինաստան
4) Ղազախստան

9 Որտե՞ղ է գտնվում Եվրոպայի խորհրդի (Եվրախորհուրդ) նստավայրը:

1) Գերմանիա
2) Իտալիա
3) Շվեյցարիա
4) Ֆրանսիա

10 Ո՞վ է ընտրվել Ռուսաստանի Դաշնության նախագահ 2018 թվականին:

1) Բորիս Ելցին
2) Միխայիլ Գորբաչով
3) Վլադիմիր Պուտին
4) Դմիտրի Մեդվեդև

11 **Ի՞նչ անվանում են ստացել 2010-2011 թվականները համաշխարհային պատմության մեջ:**

1) Պրահայի գարուն
2) Աֆրիկայի տարի
3) Արաբական գարուն
4) Մեծ թռիչքի տարի

12 **Ո՞վ է աշխարհում առաջին տիեզերագնացը:**

1) Ալան Շեփարդ
2) Նիլ Արմսթրոնգ
3) Ջեյմս Բաղյան
4) Յուրի Գագարին

13 **Որտե՞ղ է ստեղծվել ջազային երաժշտությունը:**

1) Ֆրանսիա
2) Մեքսիկա
3) Արգենտինա
4) ԱՄՆ

14 **Ո՞վ է Դմիտրի Շոստակովիչը:**

1) կինոդերասան
2) կոմպոզիտոր
3) գեղանկարիչ
4) դրամատուրգ

15 **2004 թ. Ուկրաինայում տեղի ունեցած հեղափոխությունը անվանեցին՝**

1) Նարնջագույն հեղափոխություն
2) Կակաչների հեղափոխություն
3) Վարդերի հեղափոխություն
4) Սպիտակ հեղափոխություն

16 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը:**

«Ավելի լավ է կերտել նորություններ, քան պատմել դրանց մասին»:

1) Ջորջ Բուշ Ավագ
2) Բարաք Օբամա
3) Ուինսթոն Չերչիլ
4) Ջեյմս Մաքդոնալդ

17 **Ի՞նչ է դոկտրինը:**

1) Պետության միջամտությունը տնտեսության կառավարմանը:
2) Քաղաքական կամ տեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ:
3) Մի պետության կողմից մյուս պետության տարածքի զավթում:
4) Զինված ուժերի ռազմական դիմադրության դադարեցում:

18 **Պատմական իրադարձությունները դասավորեք ժամանակագրական հաջորդականությամբ:**

ա. Ռուս-վրացական 5-օրյա պատերազմը:
բ. Հեղափոխական «Մայդանը» Ուկրաինայում:
գ. Գերմանիայի վերամիավորումը:
դ. Բոլոնիայի հռչակագրի ստորագրումը:

1) գ, դ, ա, բ
2) դ, գ, բ, ա
3) գ, բ, ա, դ
4) դ, գ, ա, բ

19 **Նախագահների անունները համապատասխանեցրեք այն երկրի անվանը, որտեղ նա կառավարել է:**

նախագահ	*երկիր*
ա. Հաֆեզ Ալ-Ասադ	1. Իրաք
բ. Դոնալդ Թրամփ	2. Ռուսաստանի Դաշնություն
գ. Բորիս Ելցին	3. ԽՍՀՄ
դ. Միխայիլ Գորբաչով	4. Սիրիա
	5. Ամերիկայի Միացյալ Նահանգներ

1) ա-4, բ-5, գ-2, դ-3
2) ա-1, բ-5, գ-3, դ-2
3) ա-3, բ-1, գ-4, դ-2
4) ա-4, բ-2, գ-5, դ-1

20 **Մասնագիտությունները համապատասխանեցրեք մշակութային գործիչների անուններին:**

մասնագիտություն	*մշակութային գործիչ*
ա. գրող	1. Սալվադոր Սալի
բ. կոմպոզիտոր	2. Ռոբերտո Ռոսելինի
գ. նկարիչ	3. Գրետա Գարբո
դ. կինոռեժիսոր	4. Սերգեյ Պրոկոֆև
	5. Գաբրիել Գարսիա Մարկես

1) ա-1, բ-5, գ-4, դ-2
2) ա-2, բ-4, գ-5, դ-3
3) ա-4, բ-3, գ-1, դ-5
4) ա-5, բ-4, գ-1, դ-2